

Սույն փաստաթուղթը միայն տեղեկատվական գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում

**►B**

Որոշակի ներկերում, լաքերում և տրանսպորտային միջոցների երեսմշակման արտադրատեսակներում օրգանական լուծույթների օգտագործման հետևանքով ցնդող օրգանական միացությունների արտանետումների սահմանափակման մասին և 1999/13/ԵՀ հրահանգը փոփոխող՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2004 թվականի ապրիլի 21-ի 2004/42/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

(ՊՏ L 143, 30.04.2004թ., էջ 87):

Փոփոխված՝

**Պաշտոնական տեղեկագիր**

**թիվ էջ ամսաթիվ**

<b>►M1</b>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 1137/2008 կանոնակարգով	L 311	1	21.11.2008թ.
<b>►M2</b>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի 2008/112/ԵՀ հրահանգով	L 345	68	23.12.2008թ.

---

**▼B**

**Որոշակի ներկերում, լաքերում և տրանսպորտային միջոցների երեսմշակման արտադրատեսակներում օրգանական լուծույթների օգտագործման հետևանքով ցնդող օրգանական միացությունների արտանետումների սահմանափակման մասին և 1999/13/ԵՀ հրահանգը փոփոխող՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2004 թվականի ապրիլի 21-ի 2004/42/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 95-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը (1),

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն (2),

Քանի որ

- 1) «Մթնոլորտն աղտոտող որոշակի նյութերի արտանետումների ազգային առավելագույն սահմանների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի հոկտեմբերի 23-ի 2001/83/ԵՀ հրահանգում ( 3 ) սահմանվում է ազգային առավելագույն սահմաններ՝ որոշակի աղտոտող նյութերի, այդ թվում՝ ցնդող օրգանական միացությունների (այսուհետ՝ ՑՕՄ) արտանետումների մասով, որոնք պետք է իրականացվեն մինչև 2010 թվականը՝ որպես օքսիդացման և գետնամերձ օզոնի դեմ պայքարի՝ Համայնքի ընդհանուր ռազմավարության մի մաս, որոնք, սակայն, չեն ներառում որոշակի աղբյուրներից այդ աղտոտիչների արտանետումների սահմանային արժեքները,
- 2) ՑՕՄ-ների արտանետումների մասով ազգային առավելագույն սահմանները պահպանելու համար անդամ պետությունները պետք է նշեն այդպիսի

արտանետումների աղբյուրների մի շարք տարբեր տեսակներ,

- 3) սույն Հրահանգով իրականացվում է ազգային մակարդակով ձեռնարկված միջոցներ՝ ՑՕՄ-ների արտանետումների առավելագույն սահմանների պահպանումն ապահովելու համար,
- 4) Համայնքում իրավական ակտերի բացակայության դեպքում, անդամ պետություններում գործող օրենսդրությունը, որը սահմանային արժեքներ է սահմանում արտադրատեսակների որոշակի տեսակներում ՑՕՄ-ների մասով, կարող է տարբերվել: Նման անհամապատասխանությունները և որոշ անդամ պետություններում այդպիսի օրենսդրության բացակայությունը կարող է անհարկի խոչընդոտներ ստեղծել առևտրի համար և խաթարել մրցակցությունը ներքին շուկայում,
- 5) այն ազգային իրավական ակտերը և դրույթները, որոնցով գետնամերձ օդոնի դեմ պայքարի նպատակով սահմանվում են սահմանային արժեքներ՝ սույն Հրահանգում նշված արտադրատեսակներում ՑՕՄ-ների պարունակության մասով, պետք է ներդաշնակեցվեն՝ այդ արտադրատեսակների ազատ տեղաշարժն առանց սահմանափակումների ապահովելու համար,
- 6) քանի որ նախատեսված գործողության նպատակը, այն է՝ ՑՕՄ-երի արտանետումների կրճատումը, չի կարող բավարար չափով իրագործվել անդամ պետությունների կողմից, որովհետև ՑՕՄ-ների արտանետումները մեկ անդամ պետությունում կարող են ազդել մեկ այլ անդամ պետության օդի որակի վրա, և ՑՕՄ արտանետումների կրճատումները, առաջարկվող գործողության ծավալի և ազդեցության շնորհիվ, կարող են առավել արդյունավետորեն իրականացվել համայնքային մակարդակում, ապա Համայնքը կարող է միջոցներ ընդունել՝ սուբսիդիարության սկզբունքին համապատասխան, ինչպես սահմանված է Համաձայնագրի 5-րդ հոդվածով: Համաչափության սկզբունքին համապատասխան՝ ինչպես սահմանված է այդ հոդվածով, սույն Հրահանգը չի սահմանազանցում այդ նպատակի իրագործման համար անհրաժեշտ միջոցների շրջանակը,

- 7) ներկերում, լաքերում և տրանսպորտային միջոցների երեսմշակման արտադրատեսակներում ՑՕՄ-ի պարունակությունն օդում առաջացնում է ՑՕՄ-ների զգալի արտանետումներ. այդ երևույթը նպաստում է ֆոտոքիմիական օքսիդիչների տեղական և անդրսահմանային առաջացմանը՝ ներքնուլորտի (տրոպոսֆերա) սահմանային շերտում,
- 8) որոշ ներկերում, լաքերում և տրանսպորտային միջոցների երեսմշակման արտադրատեսակներում ՑՕՄ-ի պարունակությունը տեխնիկական և տնտեսական հնարավորության սահմաններում պետք է նվազեցվի՝ հաշվի առնելով բնակլիմայական պայմանները,
- 9) շրջակա միջավայրի պաշտպանության բարձր մակարդակը պահանջում է սույն Հրահանգում նշված արտադրատեսակներում ՑՕՄ-ների պարունակության սահմանային արժեքի սահմանում և ձեռքբերում,
- 10) դրույթ պետք է նախատեսվի՝ անցումային միջոցների մասին այն արտադրատեսակների առնչությամբ, որոնք արտադրվել են՝ նախքան սույն Հրահանգի պահանջներն ուժի մեջ մտնելը,
- 11) անդամ պետությունները պետք է կարողանան խիստ սահմանափակ թվով՝ հատուկ նպատակներով վաճառքի և գնման անհատական լիցենզիաներ տրամադրել այնպիսի արտադրատեսակների համար, որոնք չեն պահպանում լուծիչների պարունակության առնչությամբ սույն Հրահանգով հաստատված սահմանային արժեքը,
- 12) սույն Հրահանգը լրացնում է քիմիական նյութերի և պատրաստուկների պիտակավորման մասին Համայնքի դրույթները,
- 13) սպառողների և (կամ) աշխատողների առողջության ու աշխատանքային միջավայրի պաշտպանությունը չպետք է մտնի սույն Հրահանգի գործողության ոլորտի մեջ. ուստի, սույն Հրահանգով չպետք է շոշափվեն այդ նպատակներով անդամ պետությունների կողմից ձեռնարկված միջոցները,
- 14) անհրաժեշտ է դիտանցել պարունակության սահմանային արժեքները, որպեսզի հնարավոր լինի որոշելու, թե արդյոք սույն Հրահանգում նշված ներկերի, լաքերի և

տրանսպորտային միջոցների երեսմշակման արտադրատեսակների յուրաքանչյուր տեսակում հայտնաբերված ՑՕՄ-ների խտությունը չի գերազանցում թույլատրելի սահմանները,

- 15) քանի որ տրանսպորտային միջոցների երեսմշակման որոշակի գործողությունների համար գործածվող արտադրատեսակներում ՑՕՄ-ի պարունակությունն այժմ կարգավորվում է սույն Հրահանգով, «Որոշակի գործողություններում և ձեռնարկություններում օրգանական լուծիչների օգտագործման հետևանքով ցնդող օրգանական միացությունների արտանետումների սահմանափակման մասին» Խորհրդի 1999 թվականի մարտի 11-ի 1999/13/ԵՀ հրահանգը պետք է ենթարկվի համապատասխան փոփոխությունների,
- 16) այնուամենայնիվ, անդամ պետությունները պետք է կարողանան պահպանել կամ ընդունել ազգային ակտեր՝ տրանսպորտային միջոցների երեսմշակման, այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտային միջոցների երեսպատման գործողություններից, ինչպես սահմանված է «Անդամ պետությունների՝ մեխանիկական տրանսպորտային միջոցների և դրանց կցասայլերի հավաստագրմանը վերաբերող իրավական ակտերի համապատասխանեցման մասին» Խորհրդի 1970 թվականի փետրվարի 6-ի 70/156/ԵՏՀ հրահանգով (  5  ), կամ արտադրական հաստատություններից դուրս որպես տրանսպորտային միջոցի վերանորոգման, պահպանության կամ արտաքին երեսպատման մաս իրականացվող այդպիսի գործողությունների մի մասից առաջացած արտանետումների հսկողության վերաբերյալ,
- 17) սույն Հրահանգը չի կիրառվում այնպիսի արտադրատեսակների նկատմամբ, որոնք վաճառվում են բացառապես 1999/13/ԵՀ հրահանգին համապատասխան լիազորված հաստատություններում օգտագործվելու համար, եթե արտանետումների սահմանափակմանն ուղղված միջոցառումներն ապահովում են ՑՕՄ-ի արտանետումների առնվազն համարժեք չափով կրճատումների իրականացման համար այլընտրանքային միջոցներ,
- 18) անդամ պետությունները պետք է կանոններ սահմանեն այն պատժամիջոցների վերաբերյալ, որոնք կիրառելի են սույն Կանոնակարգի դրույթների խախտումների

նկատմամբ, և ապահովեն այդ պատժամիջոցների իրականացումը: Այդ պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համարժեք և տարհամոզիչ,

- 19) սույն Հրահանգի կիրառությամբ ձեռք բերված փորձառության մասին անդամ պետությունները Հանձնաժողով զեկույց են ներկայացնում :
- 20) պետք է վերանայել սույն Հրահանգով չկարգավորվող արտադրատեսակներում ՑՕՄ–ի պարունակության կրճատման շրջանակը և արդեն նախատեսված՝ ՑՕՄ–ի սահմանային արժեքի հետագա կրճատման հնարավորությունը,
- 21) սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ ակտերը պետք է ընդունվեն Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը համապատասխան (6) ,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

### *Հոդված 1*

#### **Նպատակը և գործողության ոլորտը**

1. Սույն Հրահանգի նպատակը ՑՕՄ–ների ընդհանուր պարունակությունը որոշակի ներկերում, լաքերում և տրանսպորտային միջոցների երեսմշակման արտադրատեսակներում սահմանափակելն է՝ տրոպոսֆերային օզոնի ձևավորմանը ՑՕՄ–ների խթանման հետևանքով օդի աղտոտումը կանխելու կամ նվազեցնելու համար:
2. 1–ին պարբերությամբ սահմանված նպատակն իրականացնելու համար սույն Հրահանգով համապատասխանեցվում են որոշակի ներկերի, լաքերի և տրանսպորտային միջոցների երեսմշակման արտադրատեսակների համար ներկայացվող տեխնիկական պահանջները:
3. Սույն Հրահանգը կիրառվում է I հավելվածով սահմանված արտադրատեսակների նկատմամբ:

4. Սույն Հրահանգով չեն սահմանափակվում կամ շոշափվում Համայնքի կամ ազգային մակարդակով ձեռնարկված միջոցները, որոնք ուղղված են սպառողների ու աշխատողների առողջության և նրանց աշխատանքային միջավայրի պաշտպանությանը:

## Հոդված 2

### Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

1. «իրավասու մարմին» նշանակում է անդամ պետությունների իրավական ակտերի համաձայն՝ սույն Հրահանգից բխող պարտականություններն իրականացնելու համար պատասխանատու մարմին կամ մարմիններ.
2. «նյութեր» նշանակում է ցանկացած քիմիական տարր և դրա միացություն, երբ դրանք հանդիպում են բնական վիճակում կամ առաջանում են արդյունաբերության մեջ՝ պինդ, հեղուկ կամ գազային վիճակում.
3. ►M2 «խառնուրդ» նշանակում է երկու կամ ավելի նյութերից բաղկացած խառնուրդ կամ լուծույթ.
4. «օրգանական միացություն» նշանակում է ցանկացած միացություն, որ պարունակում է ածխածնի առնվազն մեկ տարր կամ ջրածնի, թթվածնի, ծծմբի, ֆոսֆորի, սիլիկոնի, ազոտի կամ հալոգենի մեկ կամ մի քանի տարրեր՝ բացառությամբ ածխածնի օքսիդների, անօրգանական կարբոնատների և բիկարբոնատների.
5. «ցնդող օրգանական միացություն (ՅՕՄ)» նշանակում է ցանկացած օրգանական միացություն, որի նախնական եռման ջերմաստիճանը պակաս կամ հավասար է 250°C՝ չափված 101,3 կիլոպասկալ ստանդարտ ճնշման պայմաններում.
6. «ՅՕՄ-ի պարունակություն» նշանակում է ցնդող օրգանական միացությունների զանգվածը՝ արտահայտված գրամներով լիտրում (գ/լ)՝ օգտագործման համար պատրաստ արտադրատեսակի բաղադրությունում: Պատվածքի ձևավորման ժամանակ քիմիական ռեակցիայի ենթարկվող՝ տվյալ արտադրատեսակում առկա

ցնդող օրգանական միացությունների զանգվածը չի համարվում ՅՕՄ-ի պարունակության մաս.

7. «օրգանական լուծիչ» նշանակում է ցանկացած ցնդող օրգանական միացություն, որն օգտագործվում է առանձին կամ այլ տարրերի հետ՝ ելակետային նյութեր, արտադրանք կամ թափոններ լուծելու կամ նոսրացնելու համար, կամ գործածվում է որպես մաքրող նյութ՝ աղտոտիչներ լուծելու համար, կամ որպես մածուցիկության կարգավորիչ, կամ մակերևութային լարվածության կարգավորիչ, կամ պլաստիկարար, կամ պահպանիչ պատվածք.
8. «լաքաներկանյութ» նշանակում է ցանկացած նյութ՝ ներառյալ բոլոր օրգանական լուծիչները, կամ այնպիսի լաքաներկանյութ, որը դրա համապատասխան կիրառության համար պարունակում է անհրաժեշտ օրգանական լուծիչներ, և որն օգտագործվում է՝ մակերևութի վրա դեկորատիվ, պաշտպանական կամ ֆունկցիոնալ այլ հատկությունների շնորհիվ թաղանթ գոյացնելու համար.
9. «թաղանթ» նշանակում է չընդհատվող շերտ, որն ստացվում է մակերևութի մեկանգամյա կամ բազմապատիկ պատումից.
10. «ջրադիսպերսային լաքաներկանյութեր» նշանակում է նյութեր, որոնց մածուցիկությունը կարգավորվում է ջրի միջոցով.
11. «օրգանանոսրացվող լաքաներկանյութեր» նշանակում է նյութեր, որոնց մածուցիկությունը կարգավորվում է օրգանական լուծիչների միջոցով.
12. «շուկայահանում» նշանակում է երրորդ անձանց համար հասանելիության ապահովում՝ վճարման դիմաց կամ առանց դրա: Համայնքի մաքսային տարածք ներմուծումը սույն Հրահանգի նպատակներով համարվում է շուկայահանում:

### *Հոդված 3*

#### **Պահանջները**

1. Անդամ պետություններն ապահովում են, որ I հավելվածում նշված արտադրատեսակներն իրենց տարածքում շուկայահանվեն II հավելվածով սահմանված



Ժամկետներից հետո միայն, եթե դրանցում ՑՕՄ-ի պարունակությունը չի գերազանցում II հավելվածում նշված սահմանային արժեքները, և դրանք պահպանում են 4-րդ հոդվածի դրույթները:

II հավելվածում նշված ՑՕՄ-ի պարունակության սահմանային արժեքների համապատասխանությունը որոշելու համար օգտագործվում են III հավելվածում նշված անալիտիկ մեթոդները:

I հավելվածում նշված արտադրատեսակների մասով, որոնց պետք է ավելացվեն լուծիչներ կամ լուծիչներ պարունակող այլ բաղադրիչներ, որպեսզի արտադրատեսակը համարվի գործածության համար պատրաստ, II հավելվածի սահմանային արժեքները կիրառվում են գործածության համար պատրաստ արտադրանքում՝ ՑՕՄ-ի պարունակության նկատմամբ:

2. Շեղում կատարելով 1-ին պարբերության դրույթներից՝ անդամ պետությունները վերը նշված պահանջներին համապատասխանության պայմանից ազատում են այն արտադրատեսակները, որոնք վաճառվում են 1999/13/ԵՀ հրահանգով կարգավորվող և այդ հրահանգի 3-րդ և 4-րդ հոդվածներին համապատասխան գրանցված կամ լիազորված հաստատությունում՝ իրականացվող գործողություններում բացառիկ օգտագործման համար:

3. Իրավասու մարմինների կողմից առանձնահատուկ պատմական և մշակութային արժեք համարվող կառույցների ու հնաճոճ տրանսպորտային միջոցների վերանորոգման և պահպանման նպատակով՝ անդամ պետությունները կարող են խիստ սահմանափակ թվով անհատական լիցենզիաներ տրամադրել այնպիսի արտադրատեսակների վաճառքի և գնման համար, որոնք չեն բավարարում II հավելվածով սահմանված ՑՕՄ-ի սահմանային արժեքները:

4. Սույն Հրահանգի գործողության ոլորտի մեջ մտնող այն արտադրատեսակները, որոնք արտադրվել են՝ նախքան II հավելվածով սահմանված ժամկետները և չեն բավարարում 1-ին պարբերության պահանջները, կարող են շուկայահանվել համապատասխան արտադրատեսակի նկատմամբ կիրառվող պահանջն ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող 12 ամսվա ընթացքում:

#### *Հոդված 4*

##### **Պիտակավորումը**

Անդամ պետություններն ապահովում են, որ I հավելվածում նշված արտադրատեսակները շուկայահանվելիս պիտակավորված լինեն: Պիտակի վրա նշվում է՝

- ա) արտադրատեսակի ենթատեսակը և ՑՕՄ-ի համապատասխան սահմանային արժեքը գրամ լիտրում, ինչպես նշված է II հավելվածում.
- բ) գործածության համար պատրաստ արտադրատեսակում ՑՕՄ-ի առավելագույն պարունակությունը՝ արտահայտված գրամ լիտրով:

#### *Հոդված 5*

##### **Իրավասու մարմինը**

Անդամ պետությունները նշանակում են սույն Հրահանգով սահմանված պարտականությունների իրականացման համար պատասխանատու իրավասու մարմին և դրա մասին տեղեկացնում Հանձնաժողովին ոչ ուշ, քան մինչև 2005 թվականի ապրիլի 30-ը:

#### *Հոդված 6*

##### **Դիտանցումը**

Անդամ պետությունները մշակում են դիտանցման ծրագիր՝ սույն Հրահանգի հետ համապատասխանությունն ստուգելու նպատակով:

#### *Հոդված 7*

##### **Ձեկույցներ ներկայացնելը**

Անդամ պետությունները զեկույցում են դիտանցի ծրագրի արդյունքների մասին՝ սույն Հրահանգի հետ համապատասխանությունը, ինչպես նաև 3(3) հոդվածին համապատասխան լիցենզավորված արտադրատեսակների խմբերը և քանակությունը ցույց տալու համար: Առաջին երկու զեկույցները Հանձնաժողով են ներկայացվում ՑՕՄ-ի

պարունակության սահմանային արժեքների համապատասխանության մասով՝ II հավելվածով սահմանված ժամկետներից 18 ամիս հետո: Հետագայում զեկույցները ներկայացվում են յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ: Հանձնաժողովը նախապես մշակում է դիտանցի տվյալների ներկայացման մեկ ընդհանուր ձևաչափ՝ 12(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան: Յուրաքանչյուր տարվա տվյալները ներկայացվում են Հանձնաժողով՝ պահանջի հիման վրա:

### *Հոդված 8*

#### **Ազատ շրջանառությունը**

Անդամ պետությունները չպետք է, սույն Հրահանգով սահմանված հիմքերով արգելեն, սահմանափակեն կամ կանխեն սույն Հրահանգի գործողության ոլորտի մեջ մտնող արտադրատեսակների շուկայահանումը, որոնք գործածության համար պատրաստ պայմաններում պահպանում են սույն Հրահանգի պահանջները:

### *Հոդված 9*

#### **Վերանայումը**

Հանձնաժողովին առաջարկվում է՝ Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ

1. ամենաուշը մինչև 2008 թվականը զեկույց ներկայացնել՝ 2001/81/ԵՀ հրահանգի 10-րդ հոդվածում նշված վերանայման արդյունքների հիման վրա: Այդ զեկույցում ուսումնասիրվում է՝

ա) սույն Հրահանգով չկարգավորվող արտադրատեսակների, այդ թվում՝ ներկերի և լաքերի ցողացիրների լայն շրջանակը և դրանցում ՑՕՄ-ի պարունակության նվազեցման հնարավորությունը.

բ) տրանսպորտային միջոցների երեսմշակման արտադրատեսակներում ՑՕՄ-ի առավելագույն պարունակության հետագա (երկրորդ փուլ) նվազեցման հնարավորությունը.

գ) ներկերի և լաքերի մասով երկրորդ փուլի կիրառության սոցիալ-տնտեսական ներգործությանն առնչվող ցանկացած նոր տարր.

2. II հավելվածում նշված II փուլում ՑՕՄ –ի պարունակության սահմանային արժեքների իրականացման ժամկետից ամենաուշը 30 ամիս հետո ներկայացնել զեկույց, որի մեջ հաշվի են առնվում մասնավորապես 7–րդ հոդվածում նշված զեկույցները և ներկերի, լաքերի ու տրանսպորտային միջոցների երեսմշակման արտադրատեսակների արտադրության բնագավառում ցանկացած տեխնոլոգիական զարգացում: Այդ զեկույցում ուսումնասիրվում է սույն Հրահանգով կարգավորվող արտադրատեսակների լայն շրջանակը և դրանցում ՑՕՄ–ի պարունակության հետագա նվազեցման հնարավորությունը՝ ներառյալ I հավելվածի 1.1 կետի (դ) ու (ե) ենթախմբերում և II հավելվածի Ա բաժնում նշված՝ ներքին ու արտաքին հարդարման համար օգտագործվող ներկերի միջև հնարավոր տարբերությունը:

Հարկ եղած դեպքում, զեկույցներին սույն Հրահանգում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկներ են կցվում:

### *Հոդված 10*

#### **Պատժամիջոցները**

Անդամ պետությունները պետք է սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային իրավական ակտերի խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ կանոններ սահմանեն և ձեռնարկեն բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են՝ դրանց կիրառումն ապահովելու համար: Նախատեսված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ: Անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին այդ կանոնների և միջոցների մասին ամենաուշը մինչև 2005 թվականի հոկտեմբերի 30–ը և առանց հապաղման տեղեկացնում են հետագա ցանկացած փոփոխության մասին:

**▼M1**

*Հոդված 11*

**Համապատասխանեցումը տեխնիկական առաջընթացին**

Հանձնաժողովը փոփոխում է III հավելվածը՝ ելնելով տեխնիկական առաջընթացից: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցները պետք է ընդունվեն 12(3) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

**▼B**

*Հոդված 12*

**Կոմիտեն**

1. Հանձնաժողովին աջակցում է Խորհրդի 1999/13/ԵՀ հրահանգի 13-րդ հոդվածի համաձայն ստեղծված կոմիտեն, այսուհետ՝ Կոմիտե:
2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:  
Թիվ 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով սահմանված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

**▼M1**

3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

**▼B**

*Հոդված 13*

**1999/13/ԵՀ հրահանգի փոփոխումը**

1. 1999/13/ԵՀ հրահանգում կատարել հետևյալ փոփոխությունները՝  
I հավելվածի «Տրանսպորտային միջոցների երեսմշակում» բաժնից հանել հետևյալ պարբերությոը՝

«— ճանապարհային տրանսպորտային միջոցների երեսպատում, ինչպես սահմանված է 70/156/ԵՏՀ հրահանգով, կամ այդպիսի գործողությունների մի մաս, որն իրականացվում է արտադրական հաստատություններից դուրս՝ որպես տրանսպորտային միջոցի վերանորոգման, պահպանության կամ արտաքին երեսպատման մաս, կամ»

2. Չնայած 1-ին պարբերությանը՝ անդամ պետությունները կարող են պահպանել կամ սահմանել ազգային ակտեր՝ 1999/13/ԵՀ հրահանգի գործողության ոլորտից հանված՝ տրանսպորտային միջոցների երեսմշակման գործողությունների հետևանքով առաջացող արտանետումների հսկողության համար:

#### *Հոդված 14*

#### **Փոխատեղումը**

1. Անդամ պետությունները սույն Հրահանգի համապատասխանեցման համար անհրաժեշտ իրավական ակտերը, կանոնակարգերը և վարչական ակտերը գործողության մեջ են դնում ոչ ուշ, քան մինչև 2005 թվականի հոկտեմբերի 30-ը և անհապաղ դրա մասին տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ դրույթները, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Անդամ պետությունները որոշում են նման հղում անելու ձևը:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում իրենց ազգային իրավունքի դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում՝ աղյուսակի հետ միասին, որը ցույց է տալիս, թե սույն Հրահանգի դրույթները ինչպես են համապատասխանում ընդունված ազգային դրույթներին:

## Հոդված 15

### Սույն Հրահանգն ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակման օրը:

## Հոդված 16

### Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

## ՀԱՎԵԼՎԱԾ I

### ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն Հրահանգի նպատակներով՝ ներկեր և լաքեր նշանակում են ներքևում նշված ենթախմբերում թվարկված արտադրատեսակները՝ բացառությամբ ցողացիների: Դրանք լաքաներկանյութեր են, որոնցով ներկապատվում են շենքերը, դրանց պատվանդանները և կցամասերը, օժանդակ կառույցները՝ դեկորատիվ, ֆունկցիոնալ և պաշտպանական նպատակով:

#### 1.1. Ենթախմբերը՝

ա) «անփայլ լաքաներկանյութեր ներքին պատերի և առաստաղների համար»՝  $\leq 25@60^\circ$  աստիճան փայլով նյութեր՝ նախատեսված ներքին պատերը և առաստաղները ներկապատելու համար.

բ) «փայլուն լաքաներկանյութեր ներքին պատերի և առաստաղների համար»՝  $\leq 25@60^\circ$  աստիճան փայլով նյութեր՝ նախատեսված ներքին պատերը և առաստաղները ներկապատելու համար.

- գ) «լաքաներկանյութեր քարե հիմքով՝ արտաքին պատերի համար»՝ նյութեր՝ նախատեսված բետոնապատ, աղյուսապատ կամ սվաղված արտաքին պատեր ներկապատելու համար.
- դ) «արտաքին կամ ներքին հարդարման և երեսպատման ներկեր՝ փայտյա, մետաղյա կամ պլաստմասսայից առարկաների համար»՝ նյութեր՝ նախատեսված հարդարման և երեսպատման համար, որոնք անթափանց շերտ են գոյացնում: Այդ լաքաներկանյութերը նախատեսված են փայտյա, մետաղյա կամ պլաստմասսայից առարկաների համար: Այդ ենթախմբում գործածվում են ներկաստառներ և միջանկյալ շերտեր.
- ե) «արտաքին կամ ներքին հարդարման ու երեսպատման լաքեր և ներկանյութեր»՝ լաքաներկանյութեր՝ նախատեսված հարդարման համար, որոնք թափանցիկ կամ կիսաթափանց թաղանթ են գոյացնում՝ փայտյա, մետաղյա և պլաստմասսայից առարկաների դեկորացիայի և պաշտպանության համար: Այդ ենթախմբում գործածվում են անթափանց ներկանյութեր: Անթափանց լաքաներկանյութեր՝ այնպիսի ներկանյութեր, որոնք անթափանց շերտ են առաջացնում փայտի դեկորացիայի և եղանակի անբարենպաստ ազդեցությունից պաշտպանության համար, ինչպես սահմանված է EN 927-1-ում՝ կիսակայուն խմբում.
- զ) նվազագույն երեսպատվածք ապահովող ջրային հիմքով փայտի ներկ՝ ջրային հիմքով փայտի ներկ, որը, EN 927-1:1996 ստանդարտին համապատասխան, ունի 5մկմ հաստություն՝ ISO 2808: 1997 ստանդարտի 5Ա մեթոդին համապատասխան փորձաստուգվելու ժամանակ.
- է) «ներկաստառային նյութերը» այն նյութերն են, որոնք ծակոտիները փակող և (կամ) ջրամեկուսացնող հատկություններ ունեն և նախատեսված են փայտի, պատերի ու առաստաղի վրա օգտագործելու համար.
- ը) «նախաներկաստառային ամրացնող նյութերը» այն նյութերն են, որոնք նախատեսված են փխրուն մակերևույթները կայունացնելու կամ ջրամերժ հատկություններ տալու և (կամ) փայտը բորբոսից պաշտպանելու համար.



թ) «միանգամյա պատման լաքաներկանյութերը» թաղանթագոյացնող հատկությամբ նյութեր են: Դրանք նախատեսված են հատուկ մշակում պահանջող ծածկույթների համար, ինչպես, օրինակ՝ պլաստմասսայից առարկաների համար՝ նախաներկաստառային նյութեր և մակերևութային շերտեր, երկաթյա առարկաների համար՝ նախաներկաստառային նյութով մշակված շերտ, քիմիապես ակտիվ մետաղների, օրինակ, ցինկի և ալյումինի համար՝ նախաներկաստառային նյութով մշակված շերտ, երեսպատման հականեխիչ նյութեր, հատակի լաքաներկանյութեր՝ փայտյա և ցեմենտի հատակների համար, որմնանկարների կայունությունն ապահովող նյութեր, հրակայուն նյութեր և սննդի ոլորտում կամ առողջապահական ծառայություններում սանիտարահիգիենիկ ստանդարտներ:

ժ) «երկանգամյա պատման լաքաներկանյութերը» նույն մեկանգամյա պատման լաքաներկանյութերն են, որոնց, սակայն, նախքան ներկապատումն ավելացվում է մի երկրորդ բաղադրամաս (օրինակ՝ երրորդային ամին):

ժա) «բազմերանգ լաքաներկանյութերը» այնպիսի նյութեր են, որոնք նախատեսված են անմիջապես առաջին ներկապատումից հետո երկերանգ կամ բազմերանգ ազդեցություն հաղորդելու համար:

(ժբ) «դեկորատիվ ազդեցությամբ լաքաներկանյութերը» այնպիսի նյութեր են, որոնք նախատեսված են հատուկ մշակված նախապես ներկապատված մակերևութների և ներկաստառների վրա՝ գեղագիտական հատուկ ազդեցություն հաղորդելու համար, այնուհետև չորացման ժամանակ մշակվում են տարբեր միջոցներով:

2. Սույն Հրահանգի նպատակներով՝ տրանսպորտային միջոցների երեսմշակման արտադրատեսակներ նշանակում է ներքևում նշված ենթախմբերում թվարկված արտադրատեսակները: «Դրանք օգտագործվում են ճանապարհային տրանսպորտային միջոցների երեսպատման համար, ինչպես սահմանված է 70/156/ԵՏՀ հրահանգով, կամ այդպիսի գործողությունների մի մաս, որ իրականացվում է արտադրական հաստատություններից դուրս՝ որպես

տրանսպորտային միջոցի վերանորոգման, պահպանության կամ արտաքին երեսպատման մաս»:

## 2.1. Ենթախմբերը՝

### ա) Նախապատրաստող և մաքրող նյութերը

այնպիսի արտադրատեսակներ են, որոնք նախատեսված են հին ներկանյութերը և ժանգը մեխանիկական կամ քիմիական միջոցներով հանելու կամ նոր լաքաներկանյութերի համար \*\*\* տրամադրելու համար.

i) նախապատրաստող նյութերը ներառում են հեղուկացիր սարքը մաքրող նյութերը (հեղուկացիրը և նման այլ սարքավորումները մաքրելու համար նախատեսված արտադրանք), ներկի լուծիչները, ճարպազերծիչները (ներառյալ պլաստիկի հակաստատիկ տեսակները) և սիլիկոնի լուծիչները.

ii) լրացուցիչ մաքրող միջոցները մակերևույթն աղտոտումից մաքրելու համար նախատեսված միջոցներ են, որոնք օգտագործվում են ներկապատվող առարկաները նախապատրաստելիս և նախքան դրանց ներկապատումը.

բ) «թափքի մածիկ»՝ այնպիսի թանձր միացություններ, որոնք նախատեսված են անհարթ մակերևույթները հարթեցնելու համար՝ նախքան ծեփամածիկով կամ լցաշաղախով պատելը.

### գ) «նախաներկաստառային նյութ»՝

ցանկացած լաքաներկանյութ, որ նախատեսված է քայքայումից պաշտպանելու նպատակով մետաղի մաքուր կամ երեսպատված մակերևույթը պատելու համար՝ նախքան մածիկով պատելը.

i) «մածիկ»՝ լաքաներկանյութ, որ նախատեսված է անմիջապես՝ նախքան մակերևութային շերտի ավելացումը, քայքայմանը դիմակայելու նպատակով պատելու համար, որն ապահովում է մակերևութային շերտի ամրությունը և նպաստում է ամբողջական մակերևութային պատվածքի գոյացմանը՝ վերացնելով մակերևութի վրա առկա մանր թերությունները.

ii) «սովորական մետաղյա ներկաստառային նյութեր»՝ այնպիսի նյութեր, որոնք նախատեսված են որպես ներկաստառներ (ամրություն հաղորդող նյութեր, մեկուսացնող նյութեր, մածիկներ, պոլիմերային ներկաստառներ, խոնավ շերտի վրա հաջորդ շերտով պատում պահանջող լցանյութեր, ոչ ավազային լցանյութեր և փոշեցիր (սփրեյ) լցանյութեր) օգտագործվելու համար.

iii) «խաճատանյութով ներաստառ»՝ այնպիսի պատվածք, որի բաղադրության առնվազն 0,5 տոկոս ֆոսֆորաթթու է, որը նախատեսված է անմիջապես մետաղի մաքուր մակերևույթի վրա ավելացնելու համար՝ քայքայումից պաշտպանելու և ամրություն հաղորդելու նպատակով. որպես զոդման ենթարկվող նյութեր օգտագործվող ներկանյութեր և թունավոր լուծույթներ՝ նախատեսված ցինկապատ մակերևույթների համար.

դ) «մակերևութային շերտ»՝

այնպիսի գունավոր նյութ, որը նախատեսված է որպես միաշերտ կամ բազմաշերտ հիմք ներկապատելու և փայլ ու կայունություն հաղորդելու համար: Դրանում ներառվում են բոլոր արտադրատեսակները, ինչպիսիք ներկաստառային ներկանյութերը և անգույն ներկանյութերն են՝

i) «ներկաստառային ներկանյութեր»՝ այնպիսի գունավոր նյութեր, որոնք նախատեսված են գույն և ցանկալի տեսողական էֆեկտ հաղորդելու համար, սակայն պատվածքին փայլ կամ մակերեսային կայունություն չեն տալիս.

ii) «անգույն ներկանյութեր»՝ անթափանց նյութ, որը նախատեսված է պատվածքին վերջնական փայլ և կայունության հատկանիշներ հաղորդելու համար.

ե) «երեսպատման հատուկ նյութեր»՝ այնպիսի նյութեր, որոնք նախատեսված են հատուկ հատկություններ պահանջող մակերևութային շերտեր պատելու համար, որոնք հաղորդում են մետաղյա կամ սադափյա էֆեկտ՝ մեկ շերտով պատելու դեպքում, բարձր որակի միագույն և անգույն շերտեր (օրինակ՝ հակաշերտավորիչ և ֆտորավորված անգույն շերտ), արտացոլող հատկությամբ ներկաստառներ, դեկորատիվ շերտեր (օրինակ՝ կռած

մակերեսի համար), սայթաքելը կանխող, հակահերմետիկ մածիկներ, քայքայումից պահպանող, ներքին հարդարման երեսպատման նյութեր և ցողացիրներ:

---

Հավելված II

**Ա. ՑՕՄ-Ի ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ՝  
ՆԵՐԿԵՐԻ և ԼԱՔԵՐԻ ՀԱՄԱՐ**

	Արտադրատեսակի ենթախումբը	Տեսակը	I փուլ (գ/լ) (5)	II փուլ (գ/լ) (5)
			2007թ. հունվարի 1-ից	2010թ. հունվարի 1-ից
ա.	Անփայլ ներքին պատեր և առաստաղներ (փայլը՝ < 25@60°)	WB	75	30
		SB	400	30
բ.	Փայլուն ներքին պատեր և առաստաղներ (փայլը՝ < 25@60°)	WB	150	100
		SB	400	100
գ.	Քարե հիմքով արտաքին պատեր	WB	75	40
		SB	450	430
դ.	Ներքին կամ արտաքին հարդարման և երեսպատման ներկեր՝ փայտի և մետաղի համար	WB	150	130
		SB	400	300
ե.	Ներքին կամ արտաքին հարդարման լաքեր և ներկանյութեր՝ ներառյալ անթափանց ներկանյութերը	WB	150	130
		SB	500	400
զ.	Ներքին և արտաքին երեսպատման համար նվազագույն երեսպատում ապահովող՝ ջրային հիմքով փայտի ներկեր	WB	150	130
		SB	700	700
է.	Նախաներկաստառային նյութեր	WB	50	30
		SB	450	350
ը.	Նախաներկաստառային ամրացնող նյութեր	WB	50	30
		SB	750	750
թ.	Միաշերտ պատվածքներ	WB	140	140
		SB	600	500
ժ.	Երկտարր ներազդող երեսպատման նյութեր՝ մակերեսների, ինչպես օրինակ՝ հատակի վրա օգտագործելու համար	WB	140	140
		SB	550	500
ժա.	Բազմերանգ ներկանյութեր	WB	150	100
		SB	400	100
ժբ.	Դեկորատիվ ներկանյութեր	WB	300	200
		SB	500	200

(\*) գ/լ օգտագործման համար պատրաստ նյութում



**Բ. ՑՕՄ-Ի ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՐԵՄՄՇԱԿՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

	<b>Արտադրատեսակի ենթախումբը</b>	<b>Ներկանյութերը</b>	<b>ՑՕՄ գ/լ (5) (1.1.2007)</b>
ա.	Նախապատրաստող և մաքրող	Նախապատրաստող	850
		Լրացուցիչ մաքրման միջոց	200
բ.	Թափքի մածիկ	Բոլոր տեսակները	250
գ.	Նախաներկաստառային նյութ	Մածիկ/լցաշաղախ և սովորական (մետաղյա) նախաներկաստառային նյութ	540
		Խաճատանյութով ներկաստառ	780
դ.	Մակերևութային շերտ	Բոլոր տեսակները	420
ե.	Հատուկ երեսպատման նյութեր	Բոլոր տեսակները	840
<p>(* ) գ/լ օգտագործման համար պատրաստ նյութում: «ա» ենթախմբից բացի՝ օգտագործման համար պատրաստ արտադրատեսակում ջրի պարունակությունը պետք է հաշվի չառնվի:</p>			

\_\_\_\_\_

### ՀԱՎԵԼՎԱԾ III

#### 3.1 ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ցուցանիշ	Չափման միավորը	Փորձ	
		Մեթոդը	Հրապարակման ամսաթիվը
ՑՕՄ պարունակությունը	գ/լ	ISO 11890-2	2002
ՑՕՄ պարունակություն, եթե առկա են ռեակտիվ լուծիչներ	գ/լ	ASTMD 2369	2003

(1) ՊՏ C 220, 16.09.2003թ., էջ 43:

(2) Եվրոպական պառլամենտի 2003 թվականի սեպտեմբերի 25-ի եզրակացություն (դեռ չի հրապարակվել Պաշտոնական տեղեկագրում), Խորհրդի 2004 թվականի հունվարի 7-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 79 E, 30.03.2004թ., էջ 1) և Եվրոպական պառլամենտի 2004 թվականի մարտի 30-ի դիրքորոշում (դեռ չի հրապարակվել Պաշտոնական տեղեկագրում):

(3) ՊՏ L 309, 27.11.2001թ., էջ 22:

(4) ՊՏ L 85, 29.03.1999թ., էջ 1: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 284, 31.10.2003թ., էջ 1):

(5) ՊՏ L 42, 23.02.1970թ., էջ 1: Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004/3/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 49, 19.02.2004թ., էջ 36):

(6) ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23: